ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Օգտակար ինքնաշեն պարագաների պատրաստում

5-րդ դասարան

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Լուսինե Արեստակեսյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Անուշ Աղաջանյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն.....3
Գլուխ 1.Նյութերի գեղարվեստական մշակումը.....4
և առանձնահատկությունները.....4
ԳԼՈՒԽ 2. «Ինքնաշեն պարագաների պատրաստում» թեմայի դասավանդման մեթոդիկայի մշակումը 9
ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԿՏԻՎԱՑՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ**Ошибка! Закладка не определена.**13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....16

Ներածություն

Խաղալիքը ծագել է մարդկության պատմության ընթացքում որպես երեխային կյանքին նախապատրաստելու,նրան զբաղեցնելու և զարգացնելու համար կարևոր իր:Առաջին խաղալիքներից են փափուկ խաղալիքները՝ տիկնիկները:Հայտնի չէ,թե ով է ստեղծել առաջին տիկնիկը,բայց աշխարհի բոլոր ազգերն ունեցել են իրենց ազգային տոների հետ կապված խորհրդանիշ-տիկնիկներ:Դարեր շարունակ տիկնիկները կազմել են տարբեր ազգերի մշակույթի անբաժան մասը:

Դրանք հիմնականում պատրաստել են առանց դեմքի՝ կոճղի վրա լաթի կտորներ փաթաթելով:Ավանդույթի համաձայն՝ դեմք ունեցող տիկնիկի մեջ հեշտությամբ մտնում էր չար ոգին և վնասում մարդկանց:Ավելի ուշ ստեղծվել են դեմք ունեցող տիկնիկներ:

Տիկնիկները հնագույն ժամանակներից եղել են ազգային տոների բաղկացուցիչ մասը և իրենց հագուստով ու արտաքին տեսքով մարմնավորել են տվյալ ազգի աշխարհայացքային առանձնահատկությունները:

Մենք ունենք բազմաթիվ համապատասխան ազգային տիկնիկներ, շատերը հասել են մինչև մեր օրեր և այսօր էլ հաճախ կիրառվում են տոների ժամանակ: Դրանցից են Ակլատիս,Մեծ Պահքի,Համբարձման հարս,Ուստիարայի տիկնիկները:

Հայկական մշակույթի ամենագեղեցիկ, խորհրդանշական և խորհրդավոր արժեքներից են հայոց ծիսական տիկնիկները: Տիկնիկների միջոցով ձգտել են ապահովել արգասաբերությունը,ընտանեկան և անձնական հաջողությունները:

Սովորաբար տիկնիկ պատրաստել են կանայք,օգտագործելով ամենատարբեր նյութեր՝ փայտ, թելեր, կավ, մետաղ, կաշի, մորթի, մազ և խմոր:

Տիկնիկագործությունը,որ առաջներում ավելի շուտ իբրև արհեստ էր հայտնի,այսօր արդեն արվեստի ինքնատիպ դրսևորում է:

Գլուխ 1.Նյութերի գեղարվեստական մշակումը և առանձնահատկությունները

Փափուկ խաղալիքները գոյություն ունեն շատ հին ժամանակներից: Մի այն թե, զուտ խաղալիք լինելուց բացի, դրանք կարող են լինել առավել օգտակար իր: Օրինակ՝ կար ու ձևի համար կարևոր և անհրաժեշտ պարագաներ: Այս իրերի առավելությունը նրանց յուրահատկության, անկրկնելիության մեջ է: Ամենակարևորն այն է, որ այս առարկաները պատ րաստվում են սեփական ձեռքերով, դրանց մեջ դրվում են անչափ սեր և հոգի: Գործնականում նման իրերը բավականին գործառնական են, երկար ժամանակ ծառայում են տիրոջը: Նման խաղալիքների շարքին են պատկանում կենդանիների, մրգերի և բանջարեղենների, տիկնիկի տեսքով ասեղամանները:

Դրանք պատրաստվում են թել չթողնող գործվածքներից՝ պարզ պատկերների միջոցով: Այս ինքնաշեն առարկաները հնարավորություն են տալիս անվտանգ պահպանել թելը, ասեղը, գնդասեղը: Դուք կարող եք ստեղծել ձեր ասեղամանի տարբերակը:

Փափուկ խաղալիք-բարձեր կարող են կարվել և ձեռքով, և կարի մեքենայով: Ձևավորման նպատակով օգտագործվում են թել չթողնող գործվածքներ, կոճակներ, գունավոր թելեր և այլ նյութեր: Նման փափուկ խաղալիքները կարող են լինել հրաշալի նվերներ ձեր մտերիմների համար:

Դրանք գունեղ են, յուրահատուկ և միակն են իրենց տեսակի մեջ: Ավելի փոքր չափերի փափուկ խաղալիքները կարող են օգտագործվել որպես գրչատուփ: Այս դեպքում դրանք չեն լցոնվում: Դրա փոխարեն կարվում է աստառ և ավելացվում շղթա բացել-փակելու համար: Ստեղծեք ձեր գրչատուփի տարբերակը՝ օգտվելով ներկայացված օրինակներից, կամ պարզապես ստեղծեք նորը՝ ձեր անհատական, անկրկնելի տարբերակը:

Դրանց մասնիկները կարող են իրար միացվել թակալակարով, որն, ինչպես գիտեք, փոխարինում է մեքենայակարին: Փափուկ խաղալիքներ՝ բարձեր, ասեղամաններ, գրչատուփեր, ստեղծելու փուլերը նույնանման են.

1. Ընտրել մոդելը:

2. Ընտրել նյութերը:

3. Գծել գծագիրը:

4. Պատրաստել ձևվածքը:

5. Ձևել՝ թողնելով կարաբաժիններ:

6. Դետալները միացնել գնդասեղներով կամ բլանդակարով:

7. Դետալները միացնել հիմնական կարատեսակով:

8. Ձևավորել ապլիկացիայի տարրերով

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏ
ԱՍԵՂԱՄԱՆ
Նյութեր հարմարանքներ, գործիքներ

• Կանաչ, սպիտակ կամ երկնագույն կտոր (ըստ երեխայի ընտրության), 20x20 սմ չափսի 2 հատ, Կտորը պետք է լավ արդուկված լինի:
• Մկրատ:
• Գծանշման համար մատիտ, օճառ կամ կավիճ:
• Ստվարաթղթից «տոնածառ»-ի ձևանմուշ:
• Ժապավեններ, հուլունքներ, փայլեր՝ զարդարելու համար:
• Ասեղներ՝ միջին և բարակ (հուլունքները կարելու համար):
• «մուլինե» թելեր վերը նշված գույների:
• քորոցներ:
• լցանյութ (բամբակ, սինտեպոն).
• հրիչ

N	Աշխատանքի կատարման հաջորդականությունը	Գրաֆիկական պատկեր	Գործիքներ հարմարանքներ
1	2	3	4
1	Կտորները թարս կողմից դնում ենք իրար վրա և վերևից տեղադրելով ձևանմուշը, կատարում ենք գծանշում կավիճով.		Կանաչ կտոր 20x20 սմ, կավիճ, ստվարաթղթից ձևանմուշ
2	Մկրատով կտրում ենք ըստ եզրագծի		մկրատ, քորոց

3	Կտորները շուռ ենք տալիս գծանշված մասերով դեպի ներս և միմյանց ամրացնում քորոցներով 1,0 սմ եզրից ներս:		
4	Օղակարով 3-6 տակ «մուլինե» թելով միմյանց ենք ամրացնում կտորները երկու կողմերից՝ բաց թողնելով ներքևի մասը, սինտեպոնը լցնելու համար:		ասեղ, մուլինե թել, քորոց
5	Հեռացնում ենք քորոցները և հրիչի օգնությամբ զգուշորեն լցնում տոնածառը սինտեպոնով: Կարում ենք «Տոնածառի» ներքևի		սինտեպոն, հրիչ

	մասը «մուլինե» թելերով:		
6	Ընտրում ենք տոնածառի խաղալիքները՝ տարբեր գույնի հուլունքներ, ժապավեն և փայլեր:		հուլունքներ, ժապավեն և փայլեր, ասեղ, մուլինե թել
7	Ըստ ճաշակի զարդարում ենք խաղալիքը, որը նաև հանդիսանում է ասեղաման:		

ԳԼՈՒԽ 2. «Ինքնաշեն պարագաների պատրաստում» թեմայի դասավանդման մեթոդիկայի մշակումը

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

Դասի պլան

5-րդ դասարան Ամսաթիվ _____

Դասի թեման – Տան համար օգտակար իրերի պատրաստում

Դասի տիպը - համակցված

Դասի տևողությունը – 45 րոպե

Դասի նպատակը՝

Պարզել, թե որ իրերն են հանդիսանում տան համար օգտակար, ինչից կարելի էդրանք պատրաստել: Վերլուծել ապագա շինվածքի պատրաստման տեխնոլոգիան: Ծանոթանալ ստեղծագործական նախագիծ և շնորհանդես հասկացությունների հետ: Պատրաստել օգտակար իր՝ տան համար:

Դասի խնդիրները՝

ուսուցանող (կրթական) - աշակերտների մոտ ցանկություն առաջացնել իմանալու կենցաղային իրերի ստեղծման պատմությունը, տեղեկություններ ստեղծագործական նախագծի վերաբերյալ,

զարգացնող – աշակերտների մոտ ձևավորել վերլուծելու, հորինելու, օրիգինալ նախագծեր մտածելու, ստեղծագործական աշխատանքների կատարման ունակություն-ներ և հմտություններ. զարգացնել ինքնուրույն աշխատելու կարողություններ,

դաստիարակող - աշխատանքի կատարման ընթացքում ճշտապահության և կարգապահության ձևավորում, խմբում աշխատելու ունակության ձևավորում:

Աշխատանքի օբյեկտը – Գրչաման:

Դասի անցկացման մեթոդները – մտքերի տարափ, քառաբաժան, Վենի դիագրամ, խորանարդում, նյութն ամրապնդող զրույց:

Միջառարկայական կապեր - Մաթեմատիկա՝ մարմինների կառուցում, չափման միավորներ:

Դասի կահավորումը.

- մկրատ,
- տարբեր գույների ֆետր,
- թել,
- ասեղ,
- գրչամանի պատրաստման տեխնոլոգիական քարտ,

Դասի ընթացքը.

1. Կազմակերպչական մաս
- հաճախումների ստուգում,
- աշխատանքային հագուստի ստուգում:
2. Նախորդ նյութի ստուգում և ամփոփում.
- մեխերի դասավորվածության ի՞նչ կանոններ գիտեք,
- պտուտակների ի՞նչ տեսակներ գիտեք,
- ի՞նչ գործիքներով է կատարվում դետալների վերջնամշակումը,
- ի՞նչ փուլերից է կազմված սոսնձման գործընթացը:
3. Նոր նյութի հաղորդում.

Փափուկ խաղալիքները գոյություն ունեն շատ հին ժամանակներից:

Մի այն թե, զուտ խաղալիք լինելուց բացի, դրանք կարող են լինել առավել օգտակար իր: Օրինակ՝ կար ու ձևի համար կարևոր և անհրաժեշտ պարագաներ: Այս իրերի առավելությունը նրանց յուրահատկության, անկրկնելիության մեջ է: Ամենակարևորն այն է, որ այս առարկաները պատ րաստվում են սեփական ձեռքերով, դրանց մեջ դրվում են անչափ սեր և հոգի: Գործնականում նման իրերը բավականին գործառնական են, երկար ժամանակ ծառայում են տիրոջը: Նման խաղալիքների շարքին են պատկանում կենդանիների, մրգերի և բանջարեղենների տեսքով ասեղամանները:

Դրանք պատրաստվում են թել չթողնող գործվածքներից՝ պարզ պատկերների միջոցով: Այս ինքնաշեն առարկաները հնարավորություն են տալիս անվտանգ պահպանել թելը, ասեղը, գնդասեղը: Դուք կարող եք ստեղծել ձեր ասեղամանի տարբերակը:

Փափուկ խաղալիք-բարձեր կարող են կարվել և ձեռքով, և կարի մեքենայով: Զևավորման նպատակով օգտագործվում են թել չթողնող գործվածքներ, կոճակներ, գունավոր թելեր և այլ նյութեր: Նման փափուկ խաղալիքները կարող են լինել հրաշալի նվերներ ձեր մտերիմների

համար: Դրանք գունեղ են, յուրահատուկ և միակն են իրենց տեսակի մեջ: Ավելի փոքր չափերի փափուկ խաղալիքները կարող են օգտագործվել որպես գրչատուփ: Այս դեպքում դրանք չեն լցոնվում: Դրա փոխարեն կարվում է աստառ և ավելացվում շղթա բացել-փակելու համար: Ստեղծեք ձեր գրչատուփի տարբերակը՝ օգտվելով ներկայացված օրինակներից, կամ պարզապես ստեղծեք նորը՝ ձեր անհատական, անկրկնելի տարբերակը:

Եթե գլխարկ-ասեղամանն իր տեղը կգտնի ձեր աշխատասեղանին, ապա ժամանակն է ստեղծել մի նոր տեսակի ասեղաման, որն իր տեղը կգտնի ձեր պայուսակում: Հաճախ հայտնվում ենք այնպիսի հանգամանքներում, երբ անսպասելի իրավիճակներում մեզ պետք է գալիս թել ու ասեղ, գնդասեղ և այլն: Նման իրավիճակներում մեզ փրկում է պայուսակում եղած ասեղամանը: Եթե այն պատրաստված է սեփական ձեռքերով, ապա կրկնակի հաճելի է դառնում դրա օգտագործումը: Պայուսակում հարմար է պահել նոթատետր-ասեղամանը: Ուսումնասիրեք տարբերակները և որոշեք, թե ինչ պատրաստել: Հիշե՛ք, որ ամենայուրօրինակ տարբերակը ձեր ստեղծագործությունն է:

Փափուկ խաղալիքներ՝ բարձեր, ասեղամաններ, գրչատուփեր, պայուսակներ և կախազարդեր ստեղծելու փուլերը նույնանման են.

1. Ընտրել մոդելը:
2. Ընտրել նյութերը:
3. Գծել գծագիրը:
4. Պատրաստել ձևվածքը:
5. Ձևել՝ թողնելով կարաբաժիններ:
6. Դետալները միացնել գնդասեղներով կամ բլանդակարով:
7. Դետալները միացնել հիմնական կարատեսակով:
8. Ձևավորել ապլիկացիայի տարրերով:

Աշխատանքի անվտանգության կանոններ.

- աշխատանքն ավարտելուց հետո՝ մաքրի՛ր աշխատատեղը, լվացվի՛ր:

4. Ներածական հրահանգավորում.

- գրչամանի նմուշի ցուցադրում և շինվածքի պատրաստ- ման գործընթացի վերլուծություն ըստ տեխնոլոգիական քարտի,
- կարատեսակների կատարման տեխնիկայի ցուցադրում,

- անվտանգ աշխատանքի կանոնների հիշեցում:

5. Ինքնուրույն աշխատանք և ընթացիկ հրահանգավորում. Ուսուցչի գործառույթները.

Ստուգել աշակերտների պատրաստվածությունն աշխատանքին (աշխատատեղի կազմակերպումը, անհրաժեշտ գործիքների և հարմարանքների առկայությունը),

- 1-ին շրջայց – ստուգել աշխատատեղերի կազմակերպումը և սովորողների կողմից աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումը,
- 2-րդ շրջայց – ստուգել աշխատանքային հնարների կատարման ճշգրտությունը և տեխնոլոգիական հաջորդականությունը,
- 3-րդ շրջայց – ստուգել դետալի չափսերի ճշգրտությունը և կատարվող վերահսկողությունը:

Սովորողների գործառույթները.

- տեխնոլոգիական գործողությունների ընտրություն և կատարում,
- ինքնավերահսկողության և փոխվերահսկողության իրականացում,
- անհրաժեշտության դեպքում գործունեության ճշգրտում (շտկում):

6. Եզրափակիչ հրահանգավորում.

- որակյալ և խոտան շինվածների ցուցադրում,
- սխալների և դրանց պատճառների վերլուծություն, քննարկում,
- գնահատում,
- տնային աշխատանքի հանձնարարում:

7. Աշխատատեղի մաքրում:

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԿՏԻՎԱՑՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից մեկն ուսուցչի կողմից բազմազան մեթոդների կիրառումն է, դրանց ներդաշնակ համադրումն ու տրամաբանական անցումները մեկից մյուսին: Ուսուցման և ուսումնառության ընթաց- քում գործածվող մեթոդների ու հնարների նպատակն է գիտելիքների ձեռքբերման, կարողությունների ու հմտությունների ձևավորման ընթացքում սովորողներին հնարավորություն տալ արտահայտվելու, քննարկելու սովորածի արդյունքում ծագած մտքերը, հարցեր տալու և պատասխանելու:

Ուսումնական գործընթացի կազմակերպման համար, որպես մտածողությունը խթանող համալիր միջոց է հանդիսանում ԽԻԿ համակարգը:

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: ԽԻԿ անվանումը խթանում - իմաստի ընկալում - կշռադատում փուլերի անվանումների հապավումն է: Այն կիրառվում է ոչ միայն նյութը մատուցելիս, այլև մինչ նյութը հաղորդելը և հաղորդելուց հետո:

Այս համակարգով ուսուցման կազմակերպումը նպաստում է սովորողի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով <<Շինվածքների գեղերեսում>> թեմայի դասավանդումը 5-րդ դասարանում թեման՝ հանգեցի այն եզրակացության, որ դասավանդումը բավականին բարդ գործընթաց է, որի կատարելագործման համար անհրաժեշտ է, որ.

- ուսուցիչը բավարարի իրեն ներկայացվող մանկավարժական պահանջները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, զբաղվի ինքնակրթությամբ. ուսուցիչն այնքան ժամանակ է ընդունակ նպաստելու ուրիշ- ների կրթությանը, քանի դեռ շարունակում է ինքնակրթությամբ զբաղվել:
- դասավանդման գործընթացում լայնորեն կիրառվեն ուսուցման ժամանակակից ակտիվացնող մեթոդներ:

Թիվ – դպրոցում <<Տեխնոլոգիա>> առարկայի դասաժամին իրականացրած փորձերը ցույց տվեցին, որ ժամանակակից մեթոդների կիրառումը զգալիորեն բարձրացնում է նյութի յուրացման աստիճանը: Այդ մեթոդները բոլորի համար ստեղծում են բարենպաստ միջավայր, կատարելագործում են ուսուցիչ-աշակերտ, աշակերտ- աշակերտ փոխհարաբերությունները, նպաստում են համագործակցային, հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և այլն: Սակայն կիրառվող մեթոդի արդյունավետության համար այն պետք է լինի ճիշտ ընտրված:

Մեթոդի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել մի շարք գործոններ.

- ուսուցման խնդիրները և նպատակները, բովանդակությունը, ուսումնական նյութի քանակը և բովանդակությունը, սովորողների պատրաստվածության մակարդակը և այլն,
- ուսուցիչների կողմից օգտագործվեն գնահատման նոր մեթոդներ, քանի որ չենք կարող գնահատել ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունքները՝ օգտագործելով գնահատման հին սխեմաներ:
- դասավանդման գործընթացում կիրառվեն ՏՀՏ-ներ, որոնք զգալի նվազեցնում են ուսուցչի ղեկավարությամբ կատարվող առաջադրանքների տոկոսը, նպաստում են, որպեսզի ուսուցիչն ավելի շատ ժամանակ հատկացնի աշակերտների օժանդակմանը, քան նրանց վարքը վերահսկելուն, ուսուցչին թույլ են տալիս աշխատել տարբեր կարողություններ և հմտություններ ունեցող աշակերտների հետ և այլն:

- դասավանդման գործընթացն իրականացվի գիտականորեն կազմակերպված, զանազան սարքավորումներով, գործիքներով, ժամանակակից տեխնիկայով հագեցած ուսումնական արհեստանոցներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5-րդ դաս. Տեխնոլոգիայի դասագիրք,հեղ՝

Ս.Հովսեփյան,Ա.Հարությունյան,Մ.Աղաջանյան,Լ.Վերդյան